

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՀԱԼԱԾԱՆԻ ԽՈՐՀՈՒԱՀԱՅ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐՈՂՆԵՐԻ ԴԵՄ

Խորիրդ. Հայաստանի գրազների ու գրականութեան դէմ յարուցւած հալածանեն աննախընթաց է իր ծաւալով, խստութեամբ եւ ճեւով: Երբորդ ամիսն է, որ խորիրդային գրագէտների (վիպագիր, բանաստեղծ, գրական քըննադատ) մեծ մասը քշւած է հրապարակից ու զրկւած գրականութեամբ գրադելու իրաւունքից: Դադարել է միակ «հաստափոր» հանդէսի՝ «Խորչըդային Գրականութեան» հրատարակութիւնը, իսկ գրական միւս երկու պարբերականները՝ «Գրական Թէրթն» ու «Խորչըդային Արւեստը» միանգամայն կորցրել են իրենց իսկական բնոյքն ու դարձել են «Խորչըդային Հայաստանի» եւ կոմիուսի կողմից լայն ընծայւող քաղաքական - հրապարակախօսական միւս օրգանների մի երկրորդ հրատարակութիւնը: Ինչ վերաբերում է Պետիրատին, ևս ոչ միայն այս վերջին ամիսներում չէ հարատացրել մեր գեղեցիկ գրականութիւնը նոր ստեղծագործութիւնների հրատարակութեամբ, այլ կատարել է հակառակը՝ արգիլել է վանագը արդէն լոյս ընծայած այն բոլոր գրերի, որոնց հեղինակները ներկայում ձերքակալաւած են կամ քշւած հրապարակից: Առաջին անգամը չէ որ հայ գրականութիւնն ու գրողները ենթարկում են հալածանեների, բայց երբեք (եւ ոչ իսկ առաջին հնգամեակի վերջին տարիներում) այդ հալածանեները չեն ստացել այն ծաւալը, ինչ որ

այսօր, որովհետեւ, երբեք գրելու եւ ստեղծագործելու արգելվք չէ կրել այնպիսի բացարձակ ու զանգւածային բընոյք, ինչպէս այսօր:

Նմանը չունեցող երեւոյք է նաեւ զբրագէտների ձերբակալութիւնը իրենց ստեղծագործական «սխալների» համար: Թէ՛ Հայաստանում եւ թէ խորիրդային միւս երկրներում եղել են, այո՛, դէպէնք, երբ պատիժների են ենթարկել գրողներն ու արևստագէտները, բայց ամենախիստ պատիժը «կազմակերպչական հետեւութիւններ անելուց» (Միութիւնիցից դուրս վանունլուց) այն կորմը չէ անցել: Եւ այն ինչ որ կատարուում է Հայաստանում, իսկապէս որ նախընթաց չունի անցեալում եւ ոչ ել դրա օրինակը կարող ենք գտնել ներկայումս խորիրդային որ եւ է մէկ ուրիշ երկրում: Հայաստանի գրողների մի խոչընոր մասը «կալանքի տակ է առնւած» եւ նրանց դէմ գատական գործ է բացւած ոչ թէ կուսակցական-բաղաբական «քենութիւնների» համար, ինչպէս կարծում են իմանեած արտասահմանում, այլ գուտ գրական - ստեղծագործական մարզի մէջ բոյլ տւած սխալների պատմառով:

Հայ գրողների դէմ յարուցւած հալածանեներն աննախընթաց են նաեւ մէկ ուրիշ կողմով: Խնդիրն այն է, որ հակառակ որոշակի նիզերի՝ ներկայացնել գրական նակառում տեղի ունեցած անցութարձերը, որպէս հայ գրողների հերքական ներքին գգւրտութներից մէ-

կը, անտարակուսելի է, որ այս ան-
գամ մենք վկայ ենք հանդիսանում ո՞չ
թէ ներքին պայքարի, այլ արտաքին
յարձակման: Գրական նախատի տագ -
նապը կապ ունի Ա. Խանջեանի անձ-
նասպանութիւնից յետոյ Հայաստա -
նում ծայր տած այն ընդհանուր տագ-
նապի հետ, որը, ինչպէս գիտենք, ար-
հետական կերպով ու շատ որոշ նպա-
տակներով ստեղծեց Թիֆլիզը ու պար-
տադրեց Հայկամկուսին: Հայաստանի
Գրողների Միութեան մէջ - ինչպէս եւ
խորիդ. միւս երկրների գրողների
կազմակերպութիւնների ներսում - միշտ
էլ գոյութիւն են ունեցել գրական խրմ-
րակցութիւններ ու պայքարներ: Այդ
հանրածանօթ փաստ է, որը ժխտել չի
կարելի: Բայց փաստ է նաև այն, որ
վերջին ամսպրոցը հայ գրական երկնա-
կամարում պայքեց այնպիսի մի ժա-
մանակ, երբ այնուղ համարեա թէ ամպ
չէր մնացել: Հայ գրողների շարքերը
հնանդ կայծակը ոչ թէ բնական, այլ
արհեստական ծագում ունի եւ, ինչպէս
ասացինք, հայրենի արտադրութիւն չէ,
այլ պատրաստուած է Մոսկվայի եւ Թիֆ-
լիզի աշխատանոցներում:

Ի՞նչպէս տեղի ունեցաւ այդ ամէնք:

Ա. Խանջեանի ինքնասալմութիւնից
դեռ բաւական ժամանակ անց, երբ ար-
դէն որոշ էր, որ Թիֆլիզը վճռել է օգ-
տագործել այդ դպքը Հայաստանի
Կոմիլուսին հերքական հարւած հաս-
ցնելու համար, գրադների դէմ կիրար-
կուելիք հալածանեների մասին խօս չը
կար: Մինչեւ օգոստոսի կէսերը, «նա-
ցինանիխսո - հակայեղափոխականների»
Խմբակի անդամների թւում յիշատակ-
ուում էին բացառապէս կուսակցական
գործիչներ (Ա. Գալոյեան, Ն. Ստե-
փանեան եւ այլն): «Խ. Հ.»-ի օգոս-
տոսի 15-ի թւում միայն առաջին ան-
գամ յայտարարում է, որ Ն. Ստե-
փանեանի խմբակին մասնակցել են,
արպէս «ամդամներ կամ համակիրներ»,

մի շարք գրագէտներ ու գիտութեան եւ
արևեստի գործիչներ, որոնցից քերը
մէջ է բերում Ա. Բակունիցի, Ալազանի,
Գ. Վանականիցու, Գր. Սիմոնեանի եւ
Ռ. Արյահեանի անունները: Ուստի է են-
քաղաքների, որ այդ ժամանակ արդէն տե-
ղի էր ունեցել յիշեալ անձնատրութիւն-
ների ու նրանց ընկերների ձերքակա-
լութիւնը: Խոյն օգ. 16-ին կայանում
է «Գրողների Միութեան անդամների եւ
կոլեկտիվի ընդհանուր ժողով - հաւա-
քոյքը, նիմիւած ընկեր Բերիայի՝ Հա-
յաստանի կուսակցական եւ կեմերիտա-
կան աշխատողների հետ ունեցած զր-
րոյցի բնութեանը»: «Խ. Հ.»-ի (ը.
192, օգ. 21) մէջ այդ ժողովի մասին
տպագրուած տեղեկատուութիւնից արդէն
որոշակի կերպով պարզում է, որ Հայ-
կոմիլուսից յետոյ, Բերիայի ձեռքը, իր
ամբողջ ծամրութեամբ, իշել է նաև
Հայաստանի գրողների մի խոռշը մասի
գլխին: Այդ ժողովը բաց է անում Ն.
Զարեանը, ինչ որ ցոյց է տալիս, թէ
Միութեան նախագահ Դր. Սիմոնեանը
այլեւս գործի վրա չէ: Բացակայում են
նաև այն բայրը գրադները, որոնց ձեր-
քակալման մասին հետազային հաղոր-
դում են խորիդահայ թերքերը:

«Խ. Հ.»-ի մինենայն քւում տպագրու-
ած է նաև Բերիայի «Փոչիացնել, Հող-
մացրի անել սոցիալիզմի թշնամիննե -
րին» յօդածը, որտեղ նա յայտարա-
րում է, թէ «հայ ինտելիգենցիայի մէջ,
գրողների մի որոշ հատւածում բոյն
էին դրել ազգայնական սահմարձակ
տարրեր, որոնք բացարձակ պայքար
էին մզում հայ ժողովրդի ձեւով ազգա-
յին, բռվանդակութեամբ սոցիալիստա-
կան կուլտուրայի կառուցման դէմ, հա-
կադրելով դրան «ձեւով ազգային եւ բո-
վանդակութեամբ ազգայնական» կուլ -
տուրայի հակայեղափոխական ֆորմու-
լը»:

Այստեղից պարզում է, որ Բերիան
ոչ միայն երանամգել է հալածամքներ

սկսել Հայաստանի գրադիերի դէմ, այլ նաև ձեւակերպել է այն մեղադրանքները, որոնք հետագային պիտի ներկայացւելին երանց։ Եթէ հաշվի չտանենք կառակցական գծով տրած գաղտնի երանանգները, որոնք անշուշտ երատարակութեան ներակայ չեն, վերոյիշեալ յօրւածով էլ վերջանում է Բերիայի եւ Անդրեկոմի ելոյթը Հայաստանի գրադիների ու գրականութեան դէմ։ Հետագայ ամբողջ «կամպանիան» մզում է արդէն Հայկոմկուսը եւ դրանով գրալում է բացառապէս Հայաստանի մամուլը։ Միշտ վրան բաց խաղ, որ ոչ ոքի, անշուշտ, մոլարութեան մէջ ճգել չի կարող։

Օգաստոսի մէջ (օրը չէ յայտնիած) սեղի է ունենում Հայաստանի Գրադիերի Միութեան ընդի. ժողովը, լսելու համար Ն. Դարադիեանի գեկոյցը «սրոցկիստական - զինովիեւական, հակայեղափոխական կազմակերպութեան վերաբերեալ դատավճուի» (տրած Մուկայում օգ. 24-ին), տրոցկիստ - նացինալիստ հակայեղափոխական Ն. Ստեփանեանի խմբակի եւ Հայաստանի Խորհրդ. Գրողների Միութեան մէջ բուն դրած նացինալիստական - տրոցկիստական հակայեղափոխական խմբակի ժաման։ Այս ժողովում արտայայտել են գրադիներից Արազին, Գ. Արովը, Զար. Խայեանը, Ա. Վշտունին, Դ. Դեմիքեանը, Յ. Մելիքեանը, Ս. Արմենը, Գ. Սարեանը (սրանի են հալածանեներից գերծ մնացանեները) եւ ուրիշները։ Այդ արտայայտութիւններից պարզել է, որ ամբաստանեալները երեք կարգի են բաժանւած՝ բուն «յանցազործներ», որոնք կազմակերպւել են նացինամականութեալիստ Գրիգորիոսները Գր. Սիմոնեանին եւ Ա. Քակունցի գլխաւորութեամբ, նպատակ դնելով «իրենց գրաւծքներով նացինալիզմի քեյնը սրսկել աշխատաւորութեան մէջ», սրանց վերաբերմամբ «Փր-

տած լիբերալ հաշտողական վերաբերմունք ցուցաբերողներ» եւ գործակիցներ։ Առաջին կարգին պատկանողներից յիշւած են՝ Դր. Սիմոնեանը, Ալազանը, Բակունցը, Գ. Մահարին, Թոքավենցը, Գ. Վանանդեցին եւ Վ. Նորենցը. Երկրորդ կարգում կայ յիշտառակաւած միայն Գրադների Միութեան ժարուագար եւ «Խորհրդ. Գրականութիւն» հանդէսի խմբագիր Յ. Մկրտչեանի անունը, եւ երրորդում՝ գրական ժննադատներ Ս. Ցարութիւննեանի եւ Խ. Սարգսյանի անունները։ Բացի Յ. Մկրտչեանից, որին ժողովը միայն դատավարութել է եւ Քշելի իր պաշտօններից, մնացածները բոլորն էլ վտարել են Գրողների Միութիւնից։

Այս ցանկը, ի հարկէ, լրիւ չէ։ Խորհրդակայ մամուլից հետագային պարգում է, որ գրելու իրաւունքից զրկւել են նաև ուրիշ շատ գրողներ, որոնց բուն Ռ. Արայեանը, Ա. Աղոյեանը, Մարտինեանը, Ա. Մելիքեանը, Գ. Բեսը, Խաչունիսը եւ ուրիշներ։

Սեպտ. 18 - 21-ին, Կենտկոմի պլենումում, Ամառունու արտասանած նաուից տեղիկանում ենք, որ գրագէտների շնորհագրկումն այս անգամ «կազմակերպչական հետեւութիւններով» միայն չէ սահմանափակւել, այլ դատական հետապնդումի բնոյր է ստացել։ Նըրանց դէմ սկսել է դատական գործ, կատարել է հետաքննութիւն եւ ձեւակերպւել են որոշ ամբաստանութիւններ։ Աւելարդ է ասել, որ չնկայում նստած գրագէտները բոլորն եւ «խոստվանել են իրենց յանցաներ»։

Ի՞նչ է այդ յանցաներ։ Այս մասին միատեսակ պատասխան են տակիս թէ Ամառունին եւ թէ Բերիայի մարզած միւս հայ կոմունիստները։ Գրագէտների յանցաւոր գործունեութիւնը արտայայտել է միայն իրենց գրական ժննադատական եւ գրական - գեղարվեստական գործունեութեան մէջ։ Բակունցը «նացինալիստական տեղինենց

ներ» է քոյլ տևել իր «Երանի փող» պատմածի մէջ, Ա. Յարուբիւնեանը «դաշնակցական կոմորաքանդ» է անցկացրել Գ. Սունդուկեանի երկերի երատարակութեան կցած իր յառաջարանում եւ Վ. Թոքովինցը առելութիւն է ժարողի «Կեանը Հին Հռովմէական ճանապարհի վրա» հատորում։ Թէ՝ այդ եւ թէ հալածանի ենթարկեած միւս բոլոր գրգիւների յանցագործուրիւնը տեղի է ունեցել, ինչպէս զիտենիք, տարիներ առաջ եւ Հայ Կենտկոմի ու Անդրեյկոմի աշալուրջ հսկողութեան տակ ու նրանց բոյլուրուրեամբ։ Խնչո՞ւ, սակայն, այսօր են միայն դատի տրում նրանից։ Որովհետև, տառում է Բերիան, - միայն այժմ է, որ յայտնագործել է, թէ այդ գրագիտերը ունեցել են «ամենքալ կազմակերպութիւն», «գաղտնի խմբակ»։ Դուրս է զալիս, որ գրական - ստեղծագործական գործունեութիւն տամելու համար պէտք է եղել, որ մարդիկ «գաղտնի կազմակերպութիւն» առաջացնեն։ Խնչ անհերեռութիւն...

«... Մեր խմբակի գործունեութիւնը, ամբողջավիմ վերցրած, - ասել է որպէս թէ Ա. Բակունցը հարցաքննութեան ժամանակ - ուղղած էր Համամիութեանական Կոմիտսի ազգային ժաղաքականութեան դէմ, եւ ի հակալիշխ կուսակցութեան «ձեռվ ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրա» լոգունզին, մենիք պաշտպանում էին «ազգային յատկանիշների խոսցման» թէզերը, ժաղաքականական այդ նշանակում էր «ձեռվ ազգային, բովանդակութեամբ նացիոնալիստական կուլտուրա»։ Այդպիսով ուրեմն Ա. Բակունցը բառացիօրէն կըրկնում է «Փենց խմբակի» մասին միեւնոյն մեղադրանքը, ինչ որ գտնում ենք Բերիայի յայտմի յօդածում։ Այսանը բարական է, որպէսզի միանգամայն պրզի մեզ համար գրագիտներին ներ-

կայացրած ամբաստանութեան արժէնն ու նշանակութիւնը։

Աւելի լաւ որակի չեն այն «մերկացումները», որ արւում են գրագիտների գաղտնի խմբակների մասին, որոնք, որպէս թէ, գոյութիւն են ունեցել տարիներ առաջ։ Վերը մենք ասացինք, որ, իրօք, Հայաստանի Գրողների Միութեան մէջ զանազան ժամանակներում գոյութիւն են ունեցել խմբակներ, որոնք պայքարել են միմեանց հետ։ Խմբակային այդ պայքարը տարւել է գրականութեան թէ՝ ձեւին եւ թէ խորին վերաբերող հարցերի շուրջը։ Այդ մասին շատ է գրւել խորեգային մամուլում եւ բաւականաշափ լաւարանած են խմբակների կազմը, գործունեութիւնն ու զաղափարախանութիւնը։ Մենեղը խորեգային մամուլի տեղեկարթնենքից, մենք վճռականապէս յայտարարում ենք, որ Բերիայի ձեռնարկած հալածանիների հետեւանքով հայ գրագիտների բաժանումը երկու խմբի՝ հակայեղափոխական - նացիոնալիստական եւ միջզգայնական - կոմունիստական կատարւել է արիեստական կերպով, հալածանիների ընթացքում ու յստակ նըկառումներով եւ ոչ մի կերպով չի համապատասխանում այն խմբակցութիւններին, որ կային մինչեւ Ա. Խանջեանի անձնասպանութիւնը։ Երէ Ա. Բակունցն ու Գ. Մահարին նաև անցեալում աւրատանել են «Անցիոնալիզմի» մէջ, ապա նրանց շարքին են դասւել եւ Զարենցը, Մ. Արմենը, Ստ. Զօրեանը եւ ուրիշները, որոնք, սակայն, այսօր համերէն են զալիս ամբաստանողի եւ ոչ թէ ամբաստանեալի դերում։ «Ազգային յատկանիշների խոսցման» թէզը, որի հեղինակութիւնը կապում են Բակունցի զգին, ձեւակերպել է Մ. Արմենը, դեռևս 1933 թ. ապրիլին «Գր. Թերը»-ում գրած իր յօդածում։ Այդ միեւնոյն շրջանում Դր. Սիմոնեանը ձառնից շամբեր էր տեղում ազակողման

Չարենցի գլխին, սպանալով դուքս
ձգել նրան Դրագների Միաբիւնից, երէ
նա լրջօրէն չուղղի իր նացիոնալիստա-
կան սլովակութը։ Այսօր Դր. Սիմոնեանը
բանտարկւած է, որպէս «գաշնակցա-
կան», իսկ Չարենցը զերծ է հալածանե-
ներից։ Այս կարգի ուրիշ շատ փաստեր
կան, որոնք ցոյց են տալիս ամենայն
աներկրայուրեամբ, որ «գրական ֆե-
րոնտի» այսօրւայ ծանր տագնապը

ստեղծւել է արևեստականօրէն եւ կա -
մայականօրէն, «յաւուր պատշաճի» նը-
պատակներով ու կոմկուսի Հայաստա-
նից դուրս գոնուղ մարմինների հարկա-
դրամեռվ եւ որ եւ է ձեւով չի բնում
այն իրական վիճակից, որ գոյութիւն
ունէր այդ նակատում Ա. Խանջեանի
անձնասպանութեան նախօրեակին ու
մինչեւ անգամ նրանից յետոյ։

Ա. Խ.

